

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 205-Ա

22 հուլիսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1829-Ա, N 1832-Ա, N 1833-Ա, N 1838-Ա, N 1848-Ա, N 1854-Ա, N 1855-Ա, N 1862-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 20-21-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Լուսինե Ներսիսյան Վրեժի» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Տիգրան Մեծի 55/2.
  - 2) «Մարգարիտ Ասրյան Վաչիկի» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Տիգրան Մեծի 59.
  - 3) «Արեն Սիրադեղյան Մադաթի» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Տիգրան Մեծի 55/2.
  - 4) «Աշոտ Սահակյան» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Տիգրան Մեծի 59/5-2.
  - 5) «Սեդա Ալավերդյան» Ա/Ձ՝ Ջրաշեն համայնք.
  - 6) «Անահիտ Գրիգորյան» Ա/Ձ՝ ք. Մեղրի, Ջ. Անդրանիկի 28-ի դիմաց.
  - 7) «Անահիտ Կարապետյան» Ա/Ձ՝ ք. Մեղրի, Ջ. Անդրանիկի 5-1.
  - 8) «Արտյոմ Կարապետյան» Ա/Ձ՝ ք. Մեղրի, Արամ Խաչատրյան 6.
  - 9) «Նարա Ասատրյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 10.
  - 10) «Վի Էջ Սթոուն» ՍՊԸ՝ ք. Սիսիան, Շիրակի 5.
  - 11) «Գրին Ֆարմեր» ՍՊԸ՝ ք. Հրազդան, Ջրառատ թաղամաս 999:
2. 48 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Հասմիկ Մուրադյան» Ա/Ձ՝ ք. Սիսիան, Սիսական 29.

2) «Ռուբեն Մայիլյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 13-29:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 22/07/20 17:58:28 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**